ՏԵՂԵԿԱՆՔ
«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԳԾՈՒՄ *(Կ-034-26.06.2017-ՊԻՄԻ-011/0)*
ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-106-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածում «Հանրապետության Նախագահի արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրով» բառերը փոխարինել «արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«*Հոդված 3. Արտակարգ դրություն հայտարարելու կարգը*

1. Սույն օրենքի 1-ին հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարում է արտակարգ դրություն, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

2. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, ինչպես նաեւ որոշման մեջ կատարվող փոփոխությունները եւ ~~լրացումները ենթակա են~~ անհապաղ հրապարակվում~~ան~~ են հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա զանգվածային լրատվության այլ միջոցներով: Հայաստանի Հանրապետության կառավարության արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

3. Արտակարգ դրություն հայտարարելու մասին անհապաղ տեղեկացվում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարները, Միավորված ազգերի կազմակերպության եւ Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունները եւ քարտուղարությունները միջազգային կազմակերպություններում:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի՝

1) վերնագրում «Հանրապետության Նախագահի հրամանագրի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման» բառերով.

2) 1-ին մասում «Հանրապետության Նախագահի հրամանագրում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերով:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «նշված ժամկետների ընթացքում» բառերը փոխարինել «մինչեւ նշված ժամկետների ավարտը» բառերով, իսկ «Հանրապետության Նախագահի հրամանագրով» բառերը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Հանրապետության Նախագահի հրամանագրով» եւ «Հանրապետության Նախագահի հրամանագիրն» բառերը համապատասխանաբար փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» եւ «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն» բառերով.

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով վերացնել արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը~~ կամ վերացնել արտակարգ դրությունը՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով~~ :»,

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված որևէ առանձին միջոցառման իրականացումն Ազգային ժողովի կողմից չեղյալ հայտարարվելու դեպքում դադարում է այդ միջոցառման հետագա իրականացումը, իսկ Ազգային ժողովի կողմից արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում արտակարգ դրությունը դադարում է, որի մասին բնակչությունն անհապաղ իրազեկվում է մամուլով և զանգվածային լրատվության մյուս միջոցներով:»,

~~3~~4) 4-րդ ~~մասում~~ մասի առաջին նախադասության «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերը փոխարինել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 107-րդ հոդվածի 5-րդ մասով և սույն հոդվածի 1-ին մասով» բառերով, իսկ երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «տեղաշարժման ազատության» բառերը փոխարինել «ազատ տեղաշարժվելու իրավունքի~~ման~~» բառերով, իսկ 12-րդ կետում «խոսքի ազատության» բառերը՝ «կարծիքի արտահայտման~~ելու~~ ազատության» բառերով,

2) 2-րդ մասում «Հանրապետության Նախագահն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությունն» բառերով:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «Հանրապետության Նախագահի հրամանագրով» բառերն փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերով:

2) 2-րդ մասում «Հանրապետության Նախագահի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով:

Հոդված 8. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասումն ~~ուժը կորցրած ճանաչել~~«արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 76-րդ հոդվածի պահանջներին» բառերով,

2) 4-րդ մասը~~ն~~ ուժը կորցրած ճանաչել: ~~շարադրել հետեւյալ խմբագրությամբ~~.

~~«4. Արտակարգ դրության ժամանակ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում եւ 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են սույն օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:»:~~

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 120-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրը: